ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

2020 թվականի հունվարի 30-ին կայացած «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայքի երիտասարդական քաղաքականության 2020-2029 թվականների 2020-2021 թվականների ռազմավարության և գործողությունների ծրագրի հաստատման մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ հանրային բաց լսման և քննարկման արդյունքում ստացված առարկությունների և առաջարկությունների

Հ/հ	Առարկության և (կամ) առաջարկության հեղինակը, գրության ամսաթիվը և համարը	Առարկության և (կամ) առաջարկության ամփոփ բովանդակությունը	Առարկու թյան և (կամ) առաջար կության համայնքի ղեկավարի եզրակացությունը	Նախագծում կատարված փոփոխությունը և (կամ) լրացումը
	1	2	3	4
1	Արթուր Նաջարյան և տվյալ ոլորտի մասնագետներ 30.01.2020թվ.	ՀՀՇՄԳ համայնքի 2020-2029 թվականների երիտասարդական քաղաքաքականությունը փոփոխել և նախատեսել 2020-2026 թվականների համար: Պայմանավորված հնգամյա զարգացման ծրագրով:	Համաձայնություն է ծեռք բերվել շահագրգիռ կողմերի հետ կազմակերպել և անցկացնել լրացուցիչ քննարկում	Քաղաքականության գործածության թվականները փոփոխվել են:
2	Արթուր Նաջարյան և տվյալ ոլորտի մասնագետներ 30.01.2020թվ.	Որպես երիտասարդ ընտանիք ընդունել այն զույգերի ընտանիքը, որոնց տարիքների հանրագումարը 70-ը չի գերազանցում: Պայմանավորված ՀՀ կառավարության որոշմամբ:		Համապատասխան կետը վերախմբագրվել է:
3	Արթուր Նաջարյան և տվյալ ոլորտի մասնագետներ 03.02.2020թվ.	Նախագծի N2-ի V բաժնի 4-րդ կետը վերաշարադրել: Գործողությունների ծրագրի իրականացման պատասխանատու մարմին է հանդիսանում Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժինը, որի աշխատակիցներից առնվազն մեկի պաշտոնի անձնագրում ամրագրել երիտասարդության հարցերին առնչվող		Գործողությունների ծրագրի իրականացման գործընթացում պատասխանատու մարմին է հանդիսանում տվյալ գործառույթ նախաձեռնող և իրականացնող կողմը, իսկ մշակույթի և երիտասարդության հարցերի բաժինը՝ վերահսկող մարմիններից է՝ Հավելված N1, N2 ,և գործողությունների ծրագրերերում: Գյումրու համայքի ավագանու

		համայնքային ծառայության պարտականություններ:		2018թվ. N-18 որոշումով հաստատվել է մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի կանոնադրությունը սահմանելով բաժնի գործառույթը և արդեն իսկ տվյալ բաժնի աշխատակիցների պաշտոնի անձնագրերում նշված է՝ օրինակ մշակույթի և երիտասարդության հարցերի առաջատար մասնագետ: Իսկ հանձնարարականների և (կամ) գործառույթների բաշխումը կատարում է ստորաբաժանման ղեկավարը:
4	Արթուր Նաջարյան և տվյալ ոլորտի մասնագետներ 03.02.2020թվ.	Նախագծի Հավելված N2-ի V բաժնի 17-րդ կետը վերաշադրել: Խորհուրդը վերահսկում է Գյումրու երիտասարդական քաղաքականության Հայեցակարգի, Ռազմավարության, Գործողությունների ծրագրի իրականացումը և տարեկան առնվազն երկու անգամ՝ կիսամյակային կտրվածքով ներկայացնում է գնահատման հաշվետվություն գործողությունների կատարման ընթացքի վերաբերյալ: Հաշվետվությունները ներկայացվում են ավագանու և դրվում են հանրային քննարկման:		Տվյալ առաջարկը շարադրվել է Նախագծի N2-ի բաժնի 18-րդ կետում:
5	Արթուր Նաջարյան և տվյալ ոլորտի մասնագետներ 03.02.2020թվ.	Նախագծի Հավելված N2-ի V բաժնի 18-րդ կետը վերաշադրել: Հաշվետվությունների քննարկման արդյունքում ներկայացված առաջարկությունները պարտադիր քննարկման առարկա են դարձվում խորհրդի նիստերում և ամփոփվելով ներկայացվում են համայնքի ավագանուն:		Տվյալ առաջարկը շարադրվել է Նախագծի N2-ի բաժնի 19-րդ կետում:
6	Արթուր Նաջարյան և տվյալ ոլորտի մասնագետներ 03.02.2020թվ.	Նախագծի Հավելված N2-ի VI բաժնում լրացուցիչ կետով ամրագրել նախագծի Հավելված 3-ի <<Գործողությունների		

		իրականացման պատասխանատուների, ,գործընկերների, համաֆինանսավորման աղբյուրների >>սյունակներ:		
7	Արթուր Նաջարյան և տվյալ ոլորտի մասնագետներ 03.02.2020թվ.	Նախագծի N3-ի 12-րդ կետը հեռացնել գործողության իրականացման իրատեսական մեխանիզմների բացակայության պատճառով:		Տվյալ կետը հեռացվել է:
8	Արթուր Նաջարյան և տվյալ ոլորտի մասնագետներ 03.02.2020թվ.	Նախագծի N3-ի 1-ին բաժնում ավելացնել 2021թվականին Գյումրու երիտասարդության իրավիճակի համապարփակ ուսումնասիրության գործողություն՝ մեկ վերլուծական զեկույց ցուցիչով:		Տվյալ առաջարկը ավելացվել է նախագծի N3-ի 1-ին բաժնում:
9	Արթուր Նաջարյան և տվյալ ոլորտի մասնագետներ 03.02.2020թվ.	Նախագծի N3-ի 14-րդ և 38-րդ վերաշարադրել թողնելով գործողության բովանդակությունը, սակայն հեռացնելով գործողության հնարավոր սուբյեկտի՝<<Երիտասարդա կան պալատ>> ՀՈԱԿ-ի հիշատակումը:		Համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի կողմից տրված եզրակացությունների և որպես կրկնվող գործառույթներ հիմնավորելով Նախագծի N3-ի դուրս են բերվել վերոնշյալ կետերը:
10	Արթուր Նաջարյան և տվյալ ոլորտի մասնագետներ 30.01.2020թվ.	Հավելված 1-ում ավելացնել բոլոր նյութերի էլեկտրոնային հասցեները:		Էլեկտրոնային նյութերը ավելացված են:
11	Անի Ասատրյան-Ազգային արժեք ակումբի անդամ 30.01.2020թվ.	Առաջարկում եմ կապ հաստատել ԲՈՒՀ-երի հետ, երիտասարդների իրազեկումը կազմակերպել ուսանողական խորհուրդների միջոցով:		Նմանատիպ գործառույթներ արդեն առկա են գործողությունների ծրագրում:
12	Նաիրա Գրիգորյան Շիրակի տուրիզմի զարգացման և հետազոտման կենտրոնի ղեկավար: 30.01.2020թվ.	Օդանավակայանում հատկացնել տուրիզմի համար տարածք, որտեղ կկառուցվի տուրինֆո:		Վերաբերվում է այլ ոլորտի և նմանատիպ աշխատանք արդեն տարվում է:
13	Նաիրա Գրիգորյան Շիրակի տուրիզմի զարգացման և հետազոտման կենտրոնի ղեկավար: 30.01.2020թվ.	Առաջարկում եմ նախագծից հանել լողավազան կառուցելու նպատակը, իրատեսական չամարելով		Վերոնշյալ կետը փոփոխվել է:
14	Հերմինե Պապիկյան 30.01.2020թվ.	Կամավորների համար սերտիֆիկատներից բացի		

		ստեղծել թվային բաջեր, որը կհավաստի երիտասարդի մասնակցությունը:		
15	Ազգային Արժեք Ակումբ 03.02.2020թվ.	Իրատեսական չէ թեմաթիկ հինգ այգիների կառուցումը նշված սուղ ժամկետներում:		Վերախմբագրվել է: Գոծողությունների ծրագրերից հանվել է քանակ պարունակ բաղադրիչը, այգիների կառուցումը նախատեսվում է ըստ անրաժեշտության, առաջնահերտության, և հնարավորության և քանակի:
16	Ազգային Արժեք Ակումբ 03.02.2020թվ.	Հեծանվային կանգառների կառուցումը կարող է իրատեսական համարվել երբ գլխավոր փողոցներից որոշակի մասեր կհատկացվեն հեծանվային երթևեկությանը:		Վերախմբագրվել է Գոծողությունների ծրագրերից հանվել է քանակ պարունակ բաղադրիչը, հեծանվային կանգառների կառուցումը նախատեսվում է ըստ անրաժեշտության, առաջնահերտության և հնարավորության քանակի:
17	Ազգային Արժեք Ակումբ 03.02.2020թվ.	Իրատեսական չէ 15 բացօթյա սպորտային տարածքների կառուցում , որից 5-ը կենտրոնական հատվածում, սակայն Գյումրու կենտրոնական հատվածը համարվում է քաղաքի կոլորիտի արտահայտիչը,այդ պատճառով այստեղ նպատակահարման չէ:		Վերախմբագրվել է: Գոծողությունների ծրագրերից հանվել է քանակ պարունակ բաղադրիչը, սպորտային տարածքների կառուցումը նախատեսվում է ըստ անրաժեշտության, առաջնահերթության և հնարավորության քանակի:
18	Ազգային Արժեք Ակումբ 03.02.2020թվ.	Հաղթանակի այգու վերակարգումը:		Հաղթանակի այգին համայնքապատկան չէ ,այն հանդիսանում է սեփական ,ուստի համայնքը իրավասություն չունի գործածելու:
19	Ազգային Արժեք Ակումբ 03.02.2020թվ.	Վերոնշյալ գումարը հատկացնել ՔՀԿ-ներին որոնք կներկայացնեն առավելապես իրատեսական ու խոստումնալից ծրագրեր: Հիմնականում ուղղել միջոցները դեպի բիզնեսի և ձեռներեցության խթանման վրա:		Համագործակցու թյունը պետք է լինի բոլոր շահագրգիռ երիտասարդական կազմակերպությունների հետ, իսկ ծրագրերի կարևորությունը և ընտրությունը կայացնելու է խորհուրդը բաց և թափանցիկ կերպով:
20	Ազգային Արժեք Ակումբ 03.02.2020թվ.	Երիտասարդների իրազեկման և մասնակցության ապահովման համար առաջարկում է		Նմանատիպ գործառույթներ արդեն առկա են գործողությունների ծրագրում:

		համագործակցել բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ:		
21	Ազգային Արժեք Ակումբ 03.02.2020թվ.	Իրատեսական չէ ըստ ռազմավարության գործողությունների ծրագրի այդ կարճ ժամանակահատվածում կատարել այդքան ծավալուն շին-աշխատանք: Գյումրիում տեղի ունեցող շինարարական աշխատանքները բավականաչափ երկար ժամանակեն պահաջում:		Գործողությունների ծրագրերից կառուցապատման, շին-աշխատանքների ժամկետները հանվել են:
22	<<Հայկական Կարիտաս>>-ի <<Էմիլի Արեգակ>> հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների կենտրոն 03.02.2020թվ.	Հավելված N2-ի 4-րդ գլխի առողջ ապրելակերպի 1 ենթակետից հանել սահմանափակ հնարավորություններով արտահայտությունը:		Վերոնշյալ կետը փոփոխված է:
23	<<Հայկական Կարիտաս>>-ի <<Էմիլի Արեգակ>> հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների կենտրոն 03.02.2020թվ.	Հավելված N2-ի V գլխի 11-րդ կետում մասնակցություն բառը փոխարինվի ընդգրկել բառով:		Խորհրդի կազմի վերաբերյալ կետը շարադրված է Հավելված N2-ի V գլխի 11-րդ կետի 2-րդ ենթակետում Վերոնշյալ բառը փոփոխված է:
24	<<Հայկական Կարիտաս>>-ի <<Էմիլի Արեգակ>> հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների կենտրոն 03.02.2020թվ.	Երիտասարդների տարիքը սահմանել 14-35 տարեկան:		Ելնելով Հայաստանի Հանրապետությունում և միջազգային երիտասարդական ծրագրերում, երիտասարդների համար սահմանված տարիքից:
25	<<Հայկական Կարիտաս>>-ի <<Էմիլի Արեգակ>> հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների կենտրոն 03.02.2020թվ.	Կամավորների բանկի փոխարեն ունենալ զբաղվածության բանկ:		Այլ գործառույթ՝ Գյումրիում զբաղվածությամբ զբաղվում է Գյումրու տարածքային զբաղվածության կենտրոնը:
26	<<Հայկական Կարիտաս>>-ի <<Էմիլի Արեգակ>> հաշմանդամություն ունեցող երեխաների	Ապահովել նաև մատչելի տրանսպորտային միջոցներ հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար:		Կախված համապատասխան հանրային տրանսպորտային միջոցների համալրման, և համալրման ժամկետների հետ:

	և երիտասարդների կենտրոն 03.02.2020թվ.			
27	<<Հայկական Կարիտաս>>-ի <<Էմիլի Արեգակ>> հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների կենտրոն 03.02.2020թվ.	Յուրաքանչյուր դպրոց ունենա մասնագիտական կողմնորոշման կենտրոն:		Այլ գործառույթ՝ դպրոցներում ուսումնական ծրագրերը մշակում և տալիս է ՀՀԿԳՄՍ նախարարությունը
28	<<Հայկական Կարիտաս>>-ի <<Էմիլի Արեգակ>> հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների կենտրոն 03.02.2020թվ.	Սպորտով զբաղվելու համար բաց երիտասարդական տարածքների հիմնում ՝առաջարկում ենք ավելացնել նաև մատչելի բառը:		Վերոնշյալ կետը լրամշակվել է:
29	<<Հայկական Կարիտաս>>-ի <<Էմիլի Արեգակ>> հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների կենտրոն 03.02.2020թվ.	Հավելված N2-ի Առողջ ապրելակերպի կետի առաջի ենթակետից՝ սահմանափակ հնարավորություններով արտահայտությունը հանել:		Վերոնշված կետը վերախմբագրվել է:
30	Լիլիթ Մակարյան <<Երիտասարդա-կան պալատ>> ՀՈԱԿ-ի տնօրեն 03.02.2020թվ.	Փոփոխության ենթարկել ՀՀՇՄԳ համայնքի երիտասարդական քաղաքականության 2020-2029 թվականների հայեցակարգի իրականացման ժամանակահատվածը, այն նախատեսելով առնվազն 5-7 տարվա համար:		Այլ առաջարկով ՀՀՇՄԳ համայնքի երիտասարդական քաղաքականության հայեցակարգի իրականացման ժամանակահատվածը սահմանվել է 2020-2026թվականները:
31	Լիլիթ Մակարյան <<Երիտասարդա - կան պալատ>> ՀՈԱԿ-ի տնօրեն 03.02.2020թվ.	Առաջակվում է փաստաթղթում ներառել 2020-2021թվականների համար հետազոտության անցկացում:		Գործողությունների ծրագրերի 9-րդ կետում նշվել է հետազոտություն անցկացնելու գործառույթ:
32	Լիլիթ Մակարյան <<Երիտասարդա - կան պալատ>> ՀՈԱԿ-ի տնօրեն 03.02.2020թվ.	Հավելված 1-ի 2-րդ գլխի 1-ին կետում առաջարկվում է երիտասարդի տարիքային շեմը 30-ից վերափոխել 35ը:		Ելնելով Հայաստանի Հանրապետությունում և միջազգային երիտասարդական ծրագրերում, երիտասարդների համար սահմանված տարիքից:
33	Լիլիթ Մակարյան <<Երիտասարդա - կան պալատ>>	Հավելված 1-ի 2-րդ գլխում սուբյեկտների ցանկում ներառված չեն համայնքային		Համապատասխան կետը լրամշակվել է:

	ՀՈԱԿ-ի տնօրեն 03.02.2020թվ.	կամ պետական կազմակերպությունները, հիմնադրամները որոնք նույնպես իրականացնում են երիտասարդական գործունեություն և կարող են համարվել քաղաքականության սուբյեկտներ:		
34	Լիլիթ Մակարյան <<Երիտասարդա - կան պալատ>> ՀՈԱԿ-ի տնօրեն 03.02.2020թվ.	Հավելված 1-ի 4-րդ գլխի 2-րդ կետի 4-րդ ենթակետը վերաձևակերպել 4-րդ կետը հետևյալ հերթականությամբ: Գյումրու երիտասարդների կրթական, սոցիալական, հոգևոր-մշակութային, ֆիզիկական և իրավական զարգացմանը նպաստող ենթակառուցվածքների ապահովումը, գործողությունների և նախաձեռնությունների իրականացման համար համայնքի աջակցության տրամադրումը:		Վերոնշյալ կետը վերաձևակերպվել է:
35	Լիլիթ Մակարյան <<Երիտասարդա-կան պալատ>> ՀՈԱԿ-ի տնօրեն: 03.02.2020թվ.	Հավելված N1-ի 5-րդ գլխի 1-ին կետի 5-րդ ենթակետում ՏԻՄ-ՔՀԿ գործընկերությունը սահմանափակում է երիտասարդական տարբեր խմբերի ու երիտասարդների հարցերով զբաղվող տարբեր կազմակերպությունների գործընկերության հնարավորությունը: Առաջարկվում է չսահմանափակել:		Վերոնշյալ կետը վերախմբագրվել է:
36	Լիլիթ Մակարյան <<Երիտասարդա - կան պալատ>> ՀՈԱԿ-ի տնօրեն: 03.02.2020թվ.	Հավելված N1-ի 5-րդ գլխի 1-ին կետի 7-րդ ենթակետում Տեղայնացման կարիք ըստ էության չկա , այս կետը նպատակահարմար է հանել:		Վերոնշյալ կետը հանվել է:
37	Լիլիթ Մակարյան <<Երիտասարդա-կան պալատ>> ՀՈԱԿ-ի տնօրեն: 03.02.2020թվ.	Հավելված N1-ի 6-րդ գլխի 1-6 ենթակետերում կատարել փոփոխություններ: 5-րդ ենթակետը՝ առողջ ապրելակերպ (մասայական սպորտաձևերի խթանում,առողջության առաջնային պահպանություն, վերարտադրողական առողջություն) 6-րդ ենթակետը՝		Վերոնշյալ կետերը փոփոխվել և լրամշակվել են:

		կանանց և աղջիկների առաջնորդություն,զարգացման ծրագրեր 7-րդ ենթակետը՝ կամավորության ճանաչում:		
38	Լիլիթ Մակարյան <<Երիտասարդա-կան պալատ>> ՀՈԱԿ-ի տնօրեն: 03.02.2020թվ.	Հավելված N1-ի 7-րդ գլխի 9-րդ կետ՝ Խորհրդի կազմի մեջ պետք է ներգրավված լինեն մարդիկ որոնք կլինեն չեզոք և հնարավոր կլինի խուսափել շահերի բախումից: Խորհդի նախագահը պետք է լինի ռոտացիոն կարգով: Խորհրդի գործողության ժամկետը անհրաժեշտ է կրճատել մինչև 3 տարի:		Վերոնշյալ կետը լրամշակվել է:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի երիտասարդական քաղաքականության 2020-2029 թվականների հայեցակարգի, 2020-2021 թվականների ռազմավարության և գործողությունների ծրագրի հաստատման մասին» նախագծի վերաբերյալ հանրային բաց լսման և քննարկման մասին

Հ/Հ	Տեղեկատվության բնույթը	Տեղեկատվության բովանդակությունը
1.	«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի երիտասարդական քաղաքականության 2020-2029 թվականների հայեցակարգի, 2020-2021 թվականների ռազմավարության և գործողությունների ծրագրի հաստատման մասին» նախագծի վերաբերյալ հանրային բաց լսման և քննարկման մասին	ՏԵՂԵԿԱՆՔ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի երիտասարդական քաղաքականության 2020-2029 թվականների հայեցակարգի, 2020-2021 թվականների ռազմավարության և գործողությունների ծրագրի հաստատման մասին» նախագծի վերաբերյալ հանրային բաց լսման և քննարկման մասին
2.	«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի երիտասարդական քաղաքականության 2020-2029 թվականների հայեցակարգի, 2020-2021 թվականների ռազմավարության և գործողությունների ծրագրի հաստատման մասին» նախագծի վերաբերյալ իրազեկումը	Տեղադրվել է համայնքի պաշտոնական gyumricity.am համացանցային կայքում 2020 թվականի հունվարի 14-ին՝ https://www.gyumricity.am/hy/information-center/announcements/1190-2020-01-14-12-57-17 հղմամբ և համայնքապետարանի ֆեյսբուքյան էջում, հայտարարություն է տրվել Շանթ և Ցայգ հեռուստատեսություններով, փակցվել է համայնքապետարանի հայտարարությունների ցուցատախտակին՝ նաև դրսից ընթերցելու հնարավորությամբ:
3.	Հանրային քննարկման մասնակիցները	Մասնակիցների ցուցակը կցվում է:
4.	Հանրային բաց լսման և քննարկման մասնակցության արդյունքները	Համաձայնություն է ձեռք բերվել շահագրգիռ կողմերի հետ կազմակերպել և անցկացնել լրացուցիչ քննարկում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ